

ԴԱՇՏԵՆՑԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

Իրենց ստեղծագործությունները կերտելիս հայ գրողները հաճախ են դիմում հայկական ժողովրդական բանահյուսությանը: Նրանցից է տաղանդաշատ արծակագիր Խաչիկ Դաշտենցը, որի «Խողեղան» վեպը ընթերցողի վրա թողնում է դյուցազներգության տպավորություն:

«Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը» գրքում, ծանոթանալով գրողների տարբեր դիրքորոշումների, նրանց ստեղծագործական երևակայության վերաբերյալ հարցերին, ընթերցում ենք. «Ընդհանրապես գրողի ստեղծագործական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա գեղարվեստական երևակայության գեղագիտական աշխարհը սերվում է երեք հիմնական աղբյուրներից: Դրանք հեղինակի՝ ռեալ իրականությունից ստացած տպավորություններն են, որոնք արդյունք են սեփական դիտողականության ու կենսափորձի, ապա գրական-գեղարվեստական, գիտական աղբյուրները և ժողովրդական բանահյուսությունը»¹:

Ընթերցելով Դաշտենցին հաստատում ենք, որ նրա գեղագիտական աշխարհը նույնպես սնվել ու սերվել է այդ երեք հիմնական աղբյուրներից, որոնք և բարձրացնում են նրա ստեղծագործության գեղագիտական արժեքը, առաջադրած հարցերի հրատապության ու երկից ստացած գեղարվեստական հաճույքի աստիճանը, ժողովրդի հիշողությունը մշտավառ պահելու ձգտումը, հայի կենսունակության հավերժության հաստատումը:

Առանձնապես գրողի ժողովրդական բանահյուսությանը դիմելը հետևանք է կյանքի լայն իմացության, գրողի լայն աշխարհայեցողության: Հայ ժողովրդի ներկան հենվում է անցյալի վրա, իսկ գրողի համար ժողովրդի անցյալի ճանաչողությունն ու գնահատությունը կենսական անհրաժեշտություն է, նորը կերտելու լավագույն պայման:

Հայ ժողովրդական բանահյուսության բազմազանությունն ու հարստությունը վկայում են նրա ստեղծող ժողովրդի ստեղծագործական համճարի մասին: Ժողովրդական բանահյուսության օգտագործումը Դաշտենցի կողմից խորապես գիտակցված և նպատակային բնույթ ունի: Վիպասանը պաշտպանում է այն առողջ տեսակետը, թե գրականության զարգացումը գրողից

¹ «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը», Երևան, 1976, էջ 98:

պահանջում է ուշադիր վերաբերմունք դեպի ժողովրդական բանահյուսությունը: Իրականության, կերպարների ճշմարտացի և բազմակողմանի պատկերումն ինքնին ենթադրում է, որ ժողովրդական մի դիպուկ խոսքով, մի իմաստուն առածով կամ ասացվածքով երբեմն ավելի շատ բան կարելի է ասել, քան հեղինակային նկարագրություններով:

Ժողովրդական բանահյուսությունը նշանակալի ազդեցություն է գործել Դաշտենցի լեզվի վրա. ժողովրդական բառ ու բանի խորը ճանաչողությունն ու բարձր գնահատությունը միանալով գրողի գեղարվեստական նուրբ զգացողության ու վառ երևակայության հետ, տվել է իր արգասավոր պտուղները: Դաշտենցը ջերմ հակում է ցուցաբերել դեպի ժողովրդական բանահյուսությունը՝ գիտակցելով ոչ միայն ճանաչողական, այլև դաստիարակչական նշանակությունը: «Խողեղանի» հենքի մեջ նույնությամբ կամ թեթև ոճավորումով մտցնելով ժողովրդական խոսքը գրողը դրանով իսկ վեպ է ներմուծել ժողովրդական կյանքի ու կենցաղի կոլորիտը, ժողովրդի իմաստության ու հանճարի շունչը, նրա ռեալիստական արվեստի ոճն ու ոգին: Վեպում մարգարիտների պես ցրված են ժողովրդական առած-ասացվածքները, ժողովրդական զրույցներն ու ավանդությունները, ազգագրական, ժողովրդական և ֆիդայական երգերը:

Ամեն մի նոր ստեղծագործության հյուսեր է քաղում կյանքից, պատմությունից, ժողովրդի հոգեբանությունից, իհարկե, նաև այն գեղարվեստական ավանդներից, որոնք նախորդում են գրական երկերին: «Խողեղանը», այս իմաստով, յուրովի շարունակությունն է գրական այն ավանդների, որի ակունքների մոտ կանգնած են Դովհ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Ավ.Բակունցը, Ստ.Զորյանը:

Ժողովրդական զրույցները և ավանդությունները վկայում են, թե անցյալում ինչքան վառ երևակայություն է ունեցել հայ շինականը: Դաշտենցը «Խողեղան» վեպում վարպետորեն պատկերել է հայկական ազգային սովորություններ և ավանդություններ, որ դարերով եղել են Սասունի ժողովրդի նիստ ու կացի, վարքագծի և հոգեկերտվածքի անբաժան մասը: Դրանք հատուկ ուշադրություն են պահանջում, քանի որ պատկերացում են տալիս ժամանակաշրջանի հայ մարդու պատկերացումների, հավատալիքների, պապերի օրենքները հարգելու, անցյալի հիշատակները պահելու մասին: Սկսենք Խողեղանի՝ աղջկա կճուճ փախցնելու դեպքից: Հիմնավորց ժամանակներից եկած մի գողտրիկ սովորության համաձայն սիրահար երիտասարդները աղբյուրների ակերից փախցնում էին հնձվոր աղջիկների մածոնի կճուճները: Կճուճ փախցնող պատանին ուրիշի միջոցով որոնում էր աղջկան և, համարելով

նրան իր խսմաթը, ամուսնանում էր նրա հետ: Այդպես է վարվում նաև Խոդեղանը՝ ամուսնանալով Բայազի հետ:

Մշո դաշտում ընդունված էր, որ ամեն աղջիկ ունենար իր տնային դաստիարակչուհին, որին ուստա կամ վարպետ էին ասում: Սրա պարտականությունն էր մանկությունից հսկել մեծացող աղջկան և սովորեցնել նրան նախշակարի և տնավարության բոլոր ծևերը: Աղջիկը պարտավոր էր լռելյայն կատարել իր դաստիարակչուհու կարգադրությունները և հետևել նրա բոլոր խորհուրդներին: Առանց վարպետուհու թույլտվության նա իրավունք չուներ ամուսնանալ նույնիսկ այն ժամանակ, երբ ծնողները համաձայն են, քանի որ դաստիարակչուհին իրավունք ուներ քանդել պայմանը: Բայազի ուստան Սանամն է, որին ընթերցողն արդեն ծանոթ է:

Պնտխցի Սանուկի ավանդական ընտանիքի նկարագրությունը տիպական հայ օջախի նկարագիր է, որտեղ կար կարգ ու կանոն, որտեղ ավելի փոքրը հպատակվում էր իրենից մեծին: Ամեն մեկն այդ ընտանիքում գիտեր իր տեղը և իր պարտականությունը և՛ իրենից վերևում կանգնածի և ներքևում գտնվողի հանդեպ: Այս գեղեցիկ ընտանիքը հիշեցնում է Թոթովենցի հայրական տունը, ուր թագավորում էր ազնվությունն ու օրինավորությունը:

Չեղինակի վառ երևակայությունը արտակարգ ուժով է փայլատակում հատկապես վեպի այն մասերում, ուր պատկերված են հայկական ծեսեր, տոնակատարություններ:

Չայկական հարսանիքը այնքան հին է, որքան հայն ինքը, ծնվել է հենց հայի հետ՝ հասնելով մինչև մեր օրերը: Վաղնջական ժամանակներից է հայը մտածել, որ ամուր օջախի ստեղծումը նաև ամուր պետության հիմք է, ազգային պահպանության ու տարածման յուրօրինակ դպրոց: Չայկական հարսանիքի շատ բաղադրամասեր նույնությամբ հասել են մինչև մեր օրերը: Վեպում տրված են խնամախոսության, հարսին երգելով հագցնելու, խաչեղբոր դերի, հարսին հատուկ զուռնայի նվագի տակ հոր տնից հանելու, եկեղեցում պսակի արարողակարգի, հարսի գլխին լավաշ դնելու և այլ մանրամասներ:

Չայաստան աշխարհում Սասունի ժողովուրդը աչքի է ընկնում տոկունությամբ, աշխատասիրությամբ, միմյանց օգնելու պատրաստականությամբ: Վեպում ընթերցում ենք. «Մի հրաշալի սովորություն կար այդ կողմերում, որ ռամիկ ժողովրդի մեջ պահպանվել էր վաղուց: Չնձվորներն առանձին-առանձին չէին հնձում իրենց արտերը, այլ խմբերով՝ նախ մեկի, ապա՝ մյուսի: Ում արտը չուտ էր հասունանում, առաջ նրանն էին հնձում: Ուշ հասունացող արտի տերը սիրով էր շտապում հարևանի քաղին, որովհետև գիտեր, որ երբ իր արտի

հերթը գար, ինքն անօգնական չէր մնալու»² (էջ 179): Ընթերցողի հոգուց ու մտքից հազիվ թե ջնջվեն վեպի դրական կերպարները, քանի որ ունեն դիպուկ բնութագրումներ, խորապես մարդկային դեմքեր:

Միմյանց օգնելու, իրենց բաժին ընկած հացը կիսելու պատրաստակամությամբ են ապրում խողեղանի և Օնեի ընտանիքները: Պատահում էր, որ Բայազը ծաշ չէր լինում պատրաստած, Քիշոն՝ Օնեի կինը, երևում է նրանց շեմքին՝ տաք ամանը ձեռքին: Մեկ ուրիշ անգամ Օնեն էր ցամաք հաց ուտում, Բայազն էր տաք թանապուր ուղարկում հարևանի տուն: Մի երրորդ անգամ Ծաղկանուշն էր ուղարկում: Եվ այդպես, իրար փոխնիփոխ օգնելով և օժանդակելով, ապրում էին հարևան այդ հայ ընտանիքները:

Այս և այլ սովորությունների այս լեռնական պարզ մարդիկ հետևում էին նաև նոր բնակավայրերում: Օրինակ՝ խողեղանի դագաղը վերցնելիս ընկերները երեք անգամ բարձրացրին և վայր դրեցին: Բացի դրանից դագաղի հետևից քայլում էին միայն տղամարդիկ, այդպես էր թաղման ավանդական կարգը:

Ղաշտենցը անդրադառնում է նաև հայ բնաշխարհի տարբեր տեղանունների հետ կապված ավանդություններին: Վեպը յուրահատուկ վեպ է: Այն թողնում է էպոսային դյուցազներգության տպավորություն: Եվ քանի որ հազար թեւերով կապված է «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հետ, ուրեմն՝ կանգ առնենք վեպի և էպոսի որոշ առնչությունների վրա, թեպետ ամբողջ պատումի մեջ թևածում է էպոսի շունչը, հիշատակվել են տարբեր դրվագներ, պատկերներ, թեպետ և՛ հեղինակային և հերոսների խոսքը շաղախված է էպոսի կենսարար ավիշով:

«Վեպում համդես եկող կերպարները սերում են Սասնա ծռերից, աղուն են աղում այն ջրաղացում, որի աղացող քարը Դավթի բերածն է, կանգնում են այն սալաքարերի առաջ, որտեղ ամփոփված են Դավթի և խանդութի աճյունները, տեսնում են այն վայրիացած այծերին, որ հովիվ Դավթի հոտից են մնացել, խմում են այն աղբյուրից, որ բխում է ժայռից իրեն ցած նետած խանդութի ստիքներից...»³, - գրել է Զ.Արևիկյանը:

Քիշենք հովիվ Ասատուրի կճում փախցնելու տեսարանը, որին իացորդում է ամուսնությունը Բայազի հետ: Նման տեսարան կա նաև էպոսում: Զնագույն ժամանակներին է պատկանում Սասնա հերոս դյուցազունների ամուսնության տարածված սյուժեն: Կախարդուհի Դեղձանի հետ ամուսնանա-

² Այս և բնագրի մյուս մեջբերումները կատարված են Խ.Ղաշտենցի «Խողեղան» գրքից, Երևան, 2004:

³ Զ.Արևիկյան, «Խ.Ղաշտենց (կյանքի և ստեղծագործության ուրվագիծ)», Երևան, 1989, էջ 21:

լու համար Սասնաարը գնում է Քաջանց երկիրը և պալատական դարպասների վրայից փախցնում ոսկե խնձորը: Թագավորը լուր է ուղարկում.

- Աղեկ, էս բան ով որ արե՝
Իմ աղջկան համար է արե,
Թող գա մայենք՝ ինչպես արև,
Թող ինձ ասի, ես իմ աղջիկ տամ էնոր:⁴

«Սասունցի Դավիթը» հերոսական էպոս է: Հերոսությունն այն բանի մեջ է, որ թույլ չտաս քեզ ստրկացնել, թույլ չտաս նվաստացնել, այն բանի մեջ, որ պաշտպանես սեփական օջախիդ կրակը՝ կյանքի հավերժության խորհրդանշանը: Էպոսի գաղափարներով դաստիարակված էպոսաշունչ սասունցիները հերոսական են և մարդասեր՝ Սասնա ծոերի պես, ու մրանց պես էլ փառաբանում են ազատ, հավերժական կյանքը, որի մեջ է և՛ էպոսի, և՛ վեպի ամենակարևոր գաղափարը:

Սասունցիները շատ են սիրում շաղգամ ցաննել. դա նույնպես գալիս է էպոսից: Դավիթը սիրում է շաղգամ ուտել.

...Գնաց Պառվա շաղգամի մարգ,
Շաղգամ քաղեց, շեղբկով մաքրեց,
Ու շաղգամ ուտելեն մտավ քաղաք...⁵

Հենվելով 8-րդ դարի ասորական սկզբնաղբյուրի վրա, էպոսի ստեղծման պատմության հիմքում ընկած է 749-752թթ. ազատագրական պայքարը, որն ըստ էության 747-750թթ. ապստամբության շարունակությունն էր: Ապստամբությունը տարածվեց Սասնա լեռները: Լ.Մկրտչյանը իր «...Իմանալ զբանս հանճարոյ» գրքի մեջ նշում է. «Եվ իրենք՝ սասունցիներն էլ հզոր էին, ինչպես լեռները: Լեռներում ապրող մարդկանց համար լեռները միշտ հենարան են եղել, ազգային բնավորության, ազգային աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում բնությունը: Էպոսում այսպիսի տողեր կան լեռների ու հսկաների այդ երկրի անառիության մասին.

Ես գիտեի, թե էդ Սասուն դաշտ է, գերան,
Չը գիտեի՝ քար էր, կապան,
Էնտեղ ճժեր, որ նոր էլած՝ դիվանական
Իրենց նետ կա՝ քանց ծիթիանի գերան:
Էնոնք խոտեր ունին կծան,
Էնոնք թրերը կեծական,
Էնոնք կը զարկեն մարդու ջան,
Մարդու լեշ կ'անեն պատահան»:

⁴ «Սասունցի Դավիթ» (հայկական ժողովրդական էպոս), Երևան, 1990, էջ 142:

⁵ «Սասունցի Դավիթ» (հայկական ժողովրդական էպոս), Երևան, 1990, էջ 291:

⁶ Լ.Մկրտչյան, «...Իմանալ զբանս հանճարոյ», Երևան, 1985, էջ 15:

Սասունի ժողովուրդը լեռնական ժողովուրդ է, իր լեռների պես հպարտ, ամուր և անկոտրում:

Վեպում նկարագրված շատ ավանդություններ կապված են Սասնա ծռերի անվան հետ. չէ՞ որ էպոսի հերոսների ծննդավայրը Սասունն է: Օրինակ՝ «Իրիցանքը», որ Սև լեռան նշանավոր վայրերից է, եղել է գաղմատարած Դավթի սիրած տեղերից մեկը: Ավանդությունը պատմում է, որ իբր մի անգամ, Դավիթը անտառում մրսելով, մի արևոտ տեղ է փնտրում տաքանալու համար: Հանդիպելով մի արևկող բացատի, բացականչում է. «Էստեղ տաք է, հորեղբայր, իրիցանք (վառվեցինք)»: Այդ օրվանից այդ վայրը կոչվել է Իրիցանք:

Ծովասարի անվան բացատությունն այսպես է բացատրում վիպասանը. լեռան գագաթին մի թասածև լիճ կար, որի ջուրը վճիտ էր ու մաքուր: Դրա համար էլ կոչվում է Ծովասար:

Ըստ ավանդության Մուշ անունը կապված է Աստղիկ դիցուհու հետ, որ լողանալիս մշուշով էր պատում գետն ու դաշտը, որ ծածկվի իրեն տեսնել ցանկացողներից: «Հայոց պատմություն» գրքում կարդում ենք Մշո դաշտի մասին Վրթանես Փափագյանի խոսքը. «Պետք է տեսնել այս դաշտը, ուսումնասիրել այդ դրախտանման տարածության բնակիչների արգավանդ արդյունքը, ծծել սքանչելի օդը, խմել անուշահամ ջուրը, աչքի առաջ միշտ այստեղ բնակվող ժողովրդի առողջ, պարթև հասակը, լայն թիկունքը, արևակեզ, սակայն հրատոչոր աչքերով գեր դեմքը, նրա տաժանելի կյանքը, նրա ցավերը լսել...»⁷:

Երկուն հաճախ է պատահում, որ հերոսները սքանչանում են բնության հրաշագեղությամբ: Առաջին անգամ Խողեղանը տեսնում է, թե ինչպես են սպիտակ մշուշներ փաթաթվում ծառերի կատարներին և սահելով ցած՝ ցնդում: Քիչոն նրան բացատրում է, որ երևի էլի մարդ է գնացել լողացող Աստղիկին տեսնելու: Զարմացած հովվին Քիչոն հանգիստ բացատրում է. «Երբ Աստղիկն իմանում է, որ անտառի ծակներից իրեն մարդիկ են նայում, նա ջրի փրփուրները գունդ-գունդ շարտում է նրանց երեսին: Եղ փրփուրներն են, որ Սև սարի վրայով գլորվելով՝ հասնում են մինչև Բռնաշեն: Մի մասն էլ Մառնիկի սարով թափվում է Մշո դաշտ» (էջ 83):

Հիմնավորց այս հավատալիքը ժողովրդի մեջ կենդանի էր երկար դարեր և վերոհիշյալ «մշուշի» հետ է կապվում Մուշ, Մշո անվանումների բացատրությունը: Մուշ անվան այս բացատրությամբ հանդիպել ենք նաև «Տիգրան Սեծ» դրամայում: Այնինչ գրականագետ Լ.Մկրտչյանի մոտ կարդում ենք Մուշ անվան այլ բացատրություն. արաբական աղբյուրներում պատմվում է,

⁷ Վ.Փափագյան, «Հայոց պատմություն», Երևան, 2000, էջ 95:

որ հայոց արքայադուստր Տարոնը ուներ շատ փեսացուներ, բայց սիրահարվում է Սանասարի որդուն՝ Մուշին: Տարոնի հորեղբոր որդին՝ Բակուրը, Մուշի կերպարանքով ներկայանում է Տարոնին և փախցնում, անցնում արաբների կողմը, ընդունում մահմեդականություն և ամուսնանալով Տարոնի հետ, նրան էլ ստիպում է վարվել նույն ձևով:

Թեպետ արաբների հովանավորության տակ Բակուրը լավ կյանք էր վարում, Տարոնը փախչում է նրանից, վերադառնում հոր մոտ, անցնում քրիստոնեական կյանքին: Որոշ ժամանակ անց Տարոնը ամուսնանում է իր սիրեցյալ Մուշի հետ: Այն վայրերը, ուր նրանք ապրում էին, սկսեցին կոչվել Տարոն, իսկ տեղի գլխավոր քաղաքը՝ Մուշ: Եվ հավանաբար, այդ քաղաքի մոտ գտնվող դաշտն էլ նույնպես կոչվել է Մուշ:

Վեպում հիշատակվում են նաև այլ հավատալիքների մասին: Օջախը, թոնիրը հնուց ի վեր պաշտամունքի օբյեկտ են եղել հայ ընտանիքներում: Հիշենք, թե ինչպես է այրի Ոսկեհատը, Խողեղանի հարսանիքի ժամանակ, նորահարսի և նորափեսայի հետ պտտվում թոնրի շուրջը, որից հետո նստում հարսանեկան սեղանի շուրջ: Սակայն որոշ հավատալիքներ թողնում են շինծու, անքնական տպավորություն: Դրանցից է այն, երբ առաջին երեխայի ծնունդից հետո Ոսկեհատը երեք անգամ հարցնում է.

- Ե՞ս եմ թեթե, թե՞ դու:

Բայազը երեք անգամ դրական է պատասխանում, և միայն դրանից հետո է պառավ գեղջկուհին նրան օրհնում՝ «թեթևությունով անցնի»: Նման տպավորություն է թողնում նաև այն հավատալիքը, երբ մոր կրծքից արդեն ութ տարեկան երեխային կտրելու համար, եզդի Մստոն խորհուրդ է տալիս. «Քուրո՛ ջան, է՛դ երեխային պետք է լողացնել Արագի ջրով կամ պետք է նրա հայրը Նեմրուքի կողմից եկող մի դուշ բռնի, քերեջիկը հանի տա երեխային ուտի, որ մոր կրծքից կտրվի» (էջ 599):

Վեպում նկարագրված են մասայական տեսարաններ: Օրինակ՝ Թարգմանչաց վանքում կազմակերպվող տոնախմբությունները, մրցությունները, Խողեղանի հարսանիքը, Վարդավառի տոնը և այլն: «Խողեղանը» որոշ իմաստով կարելի է կոչել ազգագրական վեպ, որտեղ ընթերցողը կգտնի մի յուրահատուկ աշխարհ, մի ժողովուրդ՝ իր ինքնատիպ ազգային սովորություններով, ապրելակերպով, հասարակական կենցաղով, սասունցիներին բնորոշ հատկություններով:

Այն, ինչ կարծում է հայ անվանի վիպասան Դ.Դեմիրճյանը վեպ գրողի մասին, վերաբերում է նաև Դաշտենցին, որ փայլուն կերպով է իրականացրել իր գրական մտահղացումը: «Իմ կարծիքով գրողը նախօրոք կազմած սխեմանե-

րով չպետք է առաջնորդվի. նա պարտավոր է նախ խորապես ուսումնասիրել իրեն հետաքրքրող նյութի, բեմադրի պատմական ժամանակաշրջանը, փաստերը, սոցիալ-տնտեսական հսկայականությունները, նշանավոր դեմքերը, կենցաղը, սովորույթները, այն ամենը, ինչ կապվում է տվյալ ժամանակաշրջանի հետ: Ապա՝ առաջնորդվելով ռեալիզմի սկզբունքներով, նա պետք է հրապարակ բերի այնպիսի գործ, որը մոր աստիճանի կարծրացմի գոականությունը և մույնիսկ պատմությունը: Գրողը պատմություն չպետք է գրի, ինչպես կարծում են որոշ մարդիկ, այլ պետք է պատմության հոգին վեր հանի գեղարվեստական երկի ձևով»⁶:

Դաշտենցը հայկական ժողովրդական էպոսին տվել է իրական գույներ՝ այն մոտեցնելով մեր օրերում (և բոլոր ժամանակներում) մղվող ժողովրդական ազատագրական պայքարին և մոր կյանքի կառուցման ձգտումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խ.Դաշտենց, «Խողեղան», Երևան, 2004:
2. ԴԴ ԳԱ «Ավանդությունները և գեղարվեստական զարգացումը», Երևան, 1976:
3. Դ.Արևիկյան, «Խ.Դաշտենց (կյանքի և ստեղծագործության ուրվագիծ)», Երևան, 1989:
4. «Սասունցի Դավիթ» (հայկական ժողովրդական էպոս), Երևան, 1990:
5. Լ.Մկրտչյան, «...Իմանալ զբանս հանձարոյ», Երևան, 1985:
6. Վ.Փափազյան, «Դայոց պատմություն», Երևան, 2000:
7. ԴԴ ԳԱ «Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները», Երևան, 1983:

⁶ ԴԴ ԳԱ «Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները», Երևան, 1983, էջ 323: